ԽՈՎԻՏ տեղի թ. 115 Ծղուկք գ.-ին մէջ Օրբել. 259 = Խովիտ։

ԽՈՏ գիւղ թ. 116 Հաբանդ գ.-ին մէջ Օրբել. 2, 59 եւ 268 = Խոտ "գալարիք"։ Հմմտ. Դալարիւ։ Ասկէ՝ ԽՈՏԱԳԵՏ ("կնոտագետոյ մեծ պտղին", Օրբել. 2, 59). Խոտ + գետ. ՎԱՆՔՈՒ ԽՈՏԱՍԿԵՐԱՑ կամ ԽՈՏԱՍԿԵՐԻՑ թ. 111 Վայոց ձոր գ.-ին մէջ Օրբել. 1, 282, 283. 2, 84, ԱՍ. 170։

ԽՈՐԱՁՈՐ անապատ = Նորավանք թ. 111 Վայոց ձոր գ.-ին մէջ Ինճիճ. հՀ. 258, 259 (Սա. Օրբելեանի Պարիզի հրատարակութեան հատորը 2, 81 հասարակ անուն է) = Խորոյոր "խորունկ ձոր" կամ "խորունկ ձորերով" (նաեւ "խորաբերան")։ Նոյն խորոյոր անապատին հետ ԱՍ. 22?։ — Հմմտ. Խորյոր տեղի թ. 117 Բաղք գ.-ին մէջ ԱՍ. 275։

ԽՈՐԱՆԱՀԱՏ ուխտ յԱրցախ կիր. 184, 199 "այսպէս կոչեցեալ սակս յոլովութեան եկեղեցեաց եւ խորանացն ի նմա" Ինճիճ. հՀ. 313, ուստի խորան "վրան, տապանակ, տեղան" + շոտ "բաղում" հՀ. 212 = "բազմաթեղան,"։ Բայց շոտը "բաղում" սովորաբար կը գործածուի միայն իբր առաջին անդամ բարդութեանց։

ԽՈՐԱՆԻՍ ամուր տեղի Եղէր. 52. Խոր "խորունկ" + նիս "աթոռ, գիրք" = "խորունկ գիրք ունեցող"?։

ԽՈՐԱՍԱՆԱՐԱԿ տեղի թ. 113 Սոթք գ.-ին մէջ Օրբել. 265 = Խրոսանկիրակ Օրբել. 1, 274, ԱՍ. 63–64. Խրոսան (Հմմտ. Խրոսան աւանը սարմին Բասենոյ մէջ ԱՍ. 33) + բակ "գաւիթ"։

ԽՈՐԹԱԳԵՏ տեղի թ. 113 Սոթք գ.-ին մէջ Օրբել. 264, ԱՍ. 64. Խորի? (= անհարազատ") + գետ։

ԽՈՐԽՈՒՐՈՒՆՔ թ. 43 գ. Տուրուբերանի տես վերն էջ 197, սովորաբար ռահմի անուն. Խրխոս (= սատականք)? + ուն մասնիկ, բան խորենացւոյ 26 խոս նահապետէն իւր անունն առած։ Ծագումը՝ մութ։

ԽՈՐՈՒԱԳԵՏ ԱՍ. 532. Խորս-? + գետ։

ԽՈՐ ՎԻՐԱՊ Արարատեան քով, տե՛ս Ս. Գրիգոր Լուսաւորիչ չարչարութեան, այժմ վիրապին վրայ եկեղեցի եւ մենաստան Վարդան Աշխ. 418, Ինճիճ. Նոր Հայ. 257, Լիմ. 1, 200 = "խորունկ վիրապ.", տե՛ս Ագաթ. 103։

ԽՐԱՍ ամրոց Նախճուանի քով Խոր. 57, Սեբ. 118, Ասող. 124, Վարդան Աշխ. 422, Երասխայ վրայ՝ այսօրուան Գարաչամբի մօտ, տե՛ս ԱՍ. 514 = Խրամ "պատատուած, ճեղքուած"։ Տե՛ս վերը Շամբ անուան տակ։

ԽՕԽՆԱՆԲԵՐԴ տե՛ս Խոյսխանայ բերդ։

ԾԱԿԵԲԻՐ գետ եւ գիւղ թ. 112 Գեղարքունի գ.-ին մէջ ԱՍ. 53. Ծակ "բացուածք, փոքրիկ ծերպ" + սոր "վէմ"։ Հմմտ. Ծակոր տեղի Մշոյ հարաւ-արեւմտեան կողմը, թերը. Տեսէ՛ք գեղ., ժայռ մը ծակով, որուն մէջէն է մամբան Ինճիճ. Նոր Հայ. 199. Ծակոսոր = սոր Օրբել. 2, 239 (ծակ + սոր մասնիկ = "ծակոսոր")։

ԾԱՂԻԿ գիւղ Մամիկոնեանց՝ իշխանաւանեան տակ փարպ. 453 = ծաղիկ (տե՛ս. ծաղկի)։ — Այս բառէն՝ ԾԱՂԻԿԻ ի վանիս "տեղի բազում անդաստանաց" Օրբել. 2, 59. ծաղիկ + ի մասնիկ։ ԾԱՂԿԱՁՈՐ Օրբել. 2, 106. ԾԱՂԿՈՒԱՁՈՒՐ թ. 38 Բշունիք գ.-ին մէջ Սեբ. 34 = "Ծաղկի ձուր"։ Այս բառէն է նաեւ ԾԱՂԿՈՒԱՑ տեղի 1. թ. 110 Ծղուկք գ.-ին մէջ Օրբել 260, 2. թ. 112 Գեղարքունի գ.-ին մէջ Օրբել. 264?։

(Շարունակելի։) Հ. ՀԻՒԲՇՄԱՆ

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

"ԱՆ" ԳԻՒՂԱՏԻՊ ՀԱՄԱՐՁԱԿՈՒՑ ԵՒ ՊԱՏԿԵՐԱՔԱՐՏԵՐ

Արգէն առիթ ունեցանք անգամ մը (ՀԱ, 1905, էջ 352) Ծանուցանելու մեր ընթերցողաց պր. Ա. Ֆէթվաճեանի ձեռնարկը, Անոյ աւերակներն եւ ուրիշ տեսարաններ՝ գունատիպ հրատարակելու կրկին ձեւով, իբրեւ պատկերաքարտ եւ իբրեւ հաւաքածոյ (ալբոմ)։ Այժմ արդէն լոյս տեսած են թէ՛ քարտերը եւ թէ՛ հաւաքածոյն։ Մեր առջեւն ունինք իբրեւ թղթատարական քարտ 24 կտոր պատկերաքարտեր, որոնց մէկ խումբը (15 կտոր) կը կազմեն Անոյ աւերակաց տեսարանները։ Այս խումբն է որ լոյս տեսած է նաեւ իբրեւ ալբոմ, առանձին գունատիպ ծածկով եւ երեքլեզուեան խորագրով։ Պատկերներն՝ երեքգունեան տպագրութեան ոճով (Dreifarbendruck) պատրաստուած են մայրաքաղաքիս անուանի մէկ արուեստանոցին կողմանէ[1]։

Անոյ աւերակաց տեսարաններու համար երեքգունեան ոճը (երեք գոյներու զատ cliché-ներով) գոհացուցիչ կրնայ համարուիլ։ Մնացեալ պատկերաքարտերու (գլխաւորաբար կենդանագրերու) համար՝ որչափ ծանօթ է մեզի՝

---

[1] "Աւեալ յամենայն բերդէն արքունի, որում կոչին Գրանի, մինչեւ ի գաղան Մեծամաղի ի բլուրն՝ որ անուանեալ կոչի Դուին, որ կայ ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի Արտաշատու, զգեան խոնարհ մինչեւ յայսպարանսն Ցիկնանի՝ անկեցին զկոյրին։ Եւ կոչեաց զանուն նորա Ցանաքար մարդի։ Եւ միւս ի մարմնոյն յեղեգնաբերանին ի նմանէ ի հարաւակոյս լցին զաշանն կաղնատուն անկով. եւ կոչեցին զանուն նորա Խորոմվակերտ։ Եւ անդ չինեցին զապարանսն արքունականս, եւ զերկոսեան տեղիսն պարսպեալ փակեցին, եւ ոչ կցեցին ի միմեանս վասն պղտոյսի Ճանապարհին" Փաւստ. 18։

[1] Գապակցու թեան նպատակ՝ Ցայոց մէջ պիտի ըլլայ, ուր Մամիկոնեանք կ'ինչէին Փաւստ. 86։ Ինճիճ. հՀ. 104 կը կարծէ թէ Ծաղիկ Ցարանոյ մէջ էր, զոր Մամիկոնեանք 440ին ժառանգած էին. Փարպ. 103—104։

[1] A. Fetvadjian, Развалины АНИ. Անի. Les Ruines d'Ani. (Vienne 1906.) Imprimerie de la Société de l'industrie graphique à Vienne. Reproduction au procédé en trois couleurs d'après les aquarelles de A. Fetvadjian.

digitised by A.R.A.R.@

գործածուած է չորրորդ գոյն մ'ալ (չորիքգոյն տպագրութիւն, Vierfarbendruck)։ Եթէ ներելի է մեզի նկարչական եւ արտատպական խնդրոց մէջ կարծիք մ'ունենալ, լաւագոյն պիտի համարէինք աւելի բազմագոյն ոճով արտատպել վերջինները։ Ի հարկէ ասոր համար անհրաժեշտ կարիւոր պարագայ մը կայ, որ՝ որչափ գիտենք՝ կը պակսէր մեր ձեռնարկու գեղարուեստասէրին, նիւթական ծախքն՝ որ այսպիսի ձեռնարկութեանց համար բնականապէս քիչ չէ։ Կը յուսանք սակայն որ ներկայ նախընծայ՝ եւ ընդհանրապէս յաջող՝ փորձերն արժանի ընդունելութիւն կը գտնեն հասարակութեան կողմանէ, եւ քաջալերութիւն չի պակսիր՝ ձեռնարկութիւնն՝ ինչպէս ծրագրուած է, շարունակելու եւ աւելի կատարելագործելու։

Մեզի համար հոս կարեւորագոյն են, — եւ աւելի ակնհաճոյ ալ երեւցան մեզի, — Անուշ աւերակները, որոնք՝ թուով 15՝ հեռաւեալ տեսարաններն են, ինչպէս նշանակուած է իւրաքանչիւր պատկերի (եւ պատկերաքարտի) վրայ։ Անի հնութիւն, Պոլիսոյ Ներ, Ընդհ. տեսարան մ մաս, Մի պալատի հատուածը, Մայր եկեղեցի, Քանդուած աշտարակ, Ագռաւմրջնոյ եկեղեցի, Դիմանոցը, Ս. Փրկիչ, Մինչեւ քերդի մասնաս (երկու տեսք՝ արեւելքէն եւ արեւմտքէն,) Հովի եկեղեցի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Աղվոյ քերդ եւ Մաղաս քերդ։ Այս տեսարաններով, — կ'ըսէ Հեղինակ-Նկարիչը՝ կողին վրայ գրուած Դասնութիւնեան մէջ, — "առանց յաւակնութիւնն ունենալու Անին ամբողջ ներկայացած լինելու, կը կարծեմ որ հաւաքած եմ այս ալբոմի մէջ՝ Բագրատունեաց մայրաքաղաքին եւ նորա անմիջական շրջակայքի աւերակներէն ամէնէն նկարչականները։"

Ցեսարաններս նկարած է, — ինչպէս ուրիշ խմագրութեանց ալ խաւրած ծանուցագիր նամակաս կը յայտնէ Հեղինակը (տես այսպէս "Մշակ, 1906, թ. 113.) — 1900 եւ 1905 տարիներու ամառներն՝ անձամբ այցելելով տեղերը։ "Իմ նկարների մէջ, կ'ըսէ, ես աշխատել եմ պահել իւրաքանչիւր քարի եւ գոյնի հարազատութիւնը, որպէս զի դրանք չլինին որեւէ աւերակներ, այլ մի մի portrait Անիի աւերակների։" Իսկ իւր ձեռնարկին գլխաւոր նպատակին համար կը ծանուցանէ. "Ձեռնարկելով այս գործին՝ աչքի առաջ ունեցել եմ, ամէն բանից առաջ, զուտ ժողովրդական մի գործ տարել, տալ ժողովրդին ոճան եւ կարելի հնարքը գեղեցկագիտական մի վայելք ունենալու։ Անիի յաւէտ ողբալի պատկերներին դէմ յանդիման կանգնեցնելով զինք՝ միջոց տալ մտածելու։" Աւելորդ չէ վերջապէս լսել իւր խօսքերը՝ պատկերաքարտերուս արուեստին մասին՝ "Ցպագրական տեխնիկան, կ'ըսէ, որչափ էլ կատարելագործեալ, այնու ամենայնիւ նրան շարժողը՝ ապրող հոգու զգացումները թրթռացնող անպարագրելի ոյժը չէ. ես աշխատեցի, որչափ այդ ինձ կարելի եղաւ, ձեռնհաս տպագրողների յանձնել իմ ակուառէլներից արտատպելու գործը, խնդրում եմ դատեցէք անաչառ։"

Եռագոյն արտատպութեան մասին կը համարձակինք դատատան ընել։ Ջրաներկ մանրանկարներէ եռագոյն տպագրութիւնը կրնանք, ինչպէս վերն ալ ակնարկեցինք, աւերակաց համար գոհացուցիչ համարիլ։ Արդէն արուեստաբոցին անունն երաշխաւոր մը էր ասոր, թէպէտ եւ Ճշմարիտ ըլլայ նաեւ այն պարագան, (զոր կը շեշտէ Նկարիչը,) թէ արտատպութեան մեքենական ոյժը յաճախ չի կրնար ներկայացնել Ճշդիւ այն նրբերագծերը՝ զոր ճարտար վրձին մը կրնայ գեղագրել, եւ աւելի Ճիշդ՝ այն զոր գեղեցկագէտ աչք մը կրնայ տեսնել եւ կը տեսնէ բնութեան մէջ։ Ի վերջոյ տպագրութեան արուեստի կողմանէ կարելի է միշտ աւելի կատարելագործել արտատպութիւնն, եթէ՝ ինչպէս ակնարկեցինք, Նկարիչ-Հրատարակիչը հասարակութեան կողմանէ գտնէ քաջալերութիւն եւ նիւթական ծախուց խնդիրը կարգադրուի։ Բուն այն կէտը՝ թէ Նկարչին վրձինն ինքնին որչափ յաջողած է՝ ջրաներկով ներկայացընելու իրական բնութիւնը, այս մասին դատելու ատակ են միայն անոնք՝ որոնց վիճակուած է անձամբ այցելելու տեղերը։ Անշուշտ համեմատութեան համար ունինք ուրիշ միջոցներ ալ, յատկապէս Քիւրքճեանի ծաւալագիտական պատկերներն, որոնք իրենց տեսակին մէջ լուսանկարչական արուեստի գեղեցկագոյն արտադրութիւններէն են։ Որչափ այս համեմատութեամբ կրնանք դատել՝ պատկերները նաեւ Ճշգրտութեան կողմանէ ընդհանրապէս գոհացուցիչ են։ Ի հարկէ աւելորդ էր հոս լուսանկարչական Ճշգրտութիւն պահանջել ամենայետին եւ ամենադոյզն մանրամասնութեանց համար ալ։ Ջրաներկ մ'ի վերջոյ լուսանկար չէ, եւ բոլորովին ուրիշ նպատակ ունի։ Լուսանկարն իւր անգերազանցելի Ճշգրտութեամբն ալ, (— ցորչափ տակաւին վերջնական կերպով չէ յաջողած գունաւորութիւնը,) — կը մնայ թեւարկասար՝ վերլուծելով բնութեան ամենամեծ գեղեցկութիւնը՝ լուսոյ երփներանգ բազմաշա-

digitised by A.R.A.R.@

նութիւնը, եւ միայն կապոյտ ճաճագայթից ազդեցութիւնը ներկայացընելով։ Մինչդեռ նկարչի մը ջանքն եղած է եւ կ'ըլլայ աւերակաց ճիշդ այս բազմերանգ հրապոյրը գեղագրել, օրէսի կարելի է ընդհանրապէս եւ օրէսի կը յաջողի այն նաեւ ճարտարագոյն մատանց։ Բաց աստի հոս մեծ դեր կը խաղայ գեղեցկագէտ աչքն, որ յաճախ պարզագոյն բնութիւն մ'ալ վարժած է ուրիշ ըմբռնմամբ ամփոփելու. նոյնպէս ճաշակը դեր մ'ունի այստեղ։ Ցխարդ եւ է՝ այս կողմանէ ալ գտնէ ստուգիւ ակնհաճոյ են եւ գեղեցիկ՝ Անուշ տեսարանները։ Եւ յամենայն դէպս ձեռնարկն՝ իրբեւ ամբողջութիւն՝ ամէն գովեստի արժանի է, եւ բաղձալի էր որ ակնկալուած քաջալերութիւնը գտնէր։

Քաջալերութիւն՝ հատարակութեան կողմանէ՝ բաղձալի էր նաեւ անոր համար որ Նկարիչ-Հրատարակիչը կարենայ ոչ միայն շարունակել եւ կատարելագործել իւր սկսած գեղեցիկ գործը, այլ նաեւ գիւրութիւն ունենայ գլուխ հանելու եւ հրապարակ հանելու ուրիշ աւելի մեծագոյն ձեռնարկ մը։ Վերջնոյս մասին մէջ (28/V թուականաւ) գրուածէն կը քաղենք հետեւեալ տողերը. "Հէնց որ մի քիչ թեթեւանամ, կ'ըսէ, այս անգամ շարկուած պարտքէս, կը գամ իրագործելու մի ուրիշ եւ անհամեմատ բարձր գործ, որ է՝ ԱՌ 24 պատկերներով եւ panoramaով, եւ իւրաքանչիւր աւերակը վերծանուած ճարտարապետական պատկերներով եւ յատակագծերով՝ նոյնէն 24 հատ. մի այդքան երես եւս հատուածոյ Անուշ ճարտարապետական շինուածոց մէջ գործածուած տեսակներէ պատկերներ, եւ երկրագիտական պատմութիւնը մեր հիմնայատակ Անիին՝ գրուած ամենակարող գրչի մը կողմէ։ Այս գիրքը՝ որ մի կերպ "ի պէտս զարգացելոց" աշխատանք է, կը լինի in foglio, եւ գունաւոր պատկերները կը լինին ամենամանրամասն եւ chromolithographie. Ա՛ա ահագին ծախս կ'ուզէ, եւ անկասկած նիւթական շահ չի տար ինձ. ես շնորհակալ կը լինիմ եթէ վնաս ալ չի տայ։ Չի գիտեմ ինչու հաւատացած եմ որ կը յաջողիմ գլուխ բերել այս գործը, որի նման բան հայը դեռ չէ արել։ Ներկայիս օրերուս մի մասը յատկացուցել եմ այս աշխատանքին եւ 12 մեծ պատկերներ արդէն լիովին նկարած պատրաստ են"։ — Ծրագիրը հրապարակիչ է անշուշտ։

Հաւաքածոյին գինը (Ուսարիոյ եւ արտասահմանի համար՝ 2 կրոն, պատկերաքարտերու հարիւրը՝ 10 կրոն, մեծաքանակ գնման ատեն 20% զեղչով,) սուղ չէ, նկատի առնելով հրատարակութեան բոլոր պարագաները[1]։

Հոս նկատողութեան առնք մենք գլխաւորապէս Անուշ տեսարանները։ Իրրեւ պատկերաքարտ հրատարակուած են գարձեալ 10 կտորներ, որոնց երեքը հայ բնաշխարհի տեսարաններ են (Արարատ, Արփիչ եւ Սեւանայ լիճն ու կղզին,) եւ երկուքը՝ հայ օրիորդաց տպեր "Հայուհի" խորագրով. մնացեալքն են՝ Իրէնի Ինքնաւորը, Աղջիկ Հէնիը, Ծերազ տեսարանը, Ս. Պոլսեցի Իրէնի եւ Ռուսս գոյատիլեան։

Հ. Ե. Տ.

[1] Գիրքնայի եւ արտասահմանի համար գիտել հասցէներ՝ Herrn Boghos Kürkdjian, Wien, III/s Radetzkystr. 4. (Oesterreich. — Ռուսաստանի համար՝ Одесса, Торг. домъ Бозджіанъ-Кюрдженъ. — Батумъ, Армянъ Фетхаджіанъ. Ռուսաստանի համար Հաւաքածոյն ("Ընդ.") կ'արժէ 1 ռուբլի, պատկերաքարտերու հարիւրը՝ 5 ռբ.։



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՍԿՊՏԵՄԲԵՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

Ուսուցչապետ Դր. Մ. Բիտնէր (պտկրզրդ.). 257։
ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ — Թուղթ երկնառաք. 259.
ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ — Ցուցակ ձեռագրաց Թաւրիզի. 264։
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ — Միքայէլ Մալիեան զինուորական մարտարապետութեան բաժնի զօրապետը (պատկերազարդ). 271։
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ — Արարատի մատենագրեր Հայաստանի մասին. 273։
ՀՆԱԽՕՍԱԿԱՆ — Անմարմ մը հնութեան ընկերներու. 277։
ԼԵԶՎՈՒԱԲԱՆԱԿԱՆ — Հայերէն եւ դրացի լեզուները. 279։

ԱՇԼԵՏԻՒՃԼՔ

Ծաղկիթ-Ծոնոյ — 1. † Մակար Եպիսկոպոս Բարխուդարեան։ — 2. Գեղունի 1906։ 3. — L. Duchesne. — 4. Թարգմանութիւն Գիրք Թղթոց-էն։ — 5. Հետազրոզական ու կարեւոր գիտութ. 287։

ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԼԵԶՎՈՒԱԲԱՆԱԿԱՆ — Հին հայերէնի ցուցական դերանունները. 289։
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ — Գաբրիէլ Վալիեան (պատկերազարդ)։ 297։
ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ — Եղիշէ, քննական ուսումնասիրութիւն. 299։
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ — Հին Հայոց տեղւոյ անունները. 310։
ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ — "Անի" գունատիպ հաւաքածոյ եւ պատկերաքարտեր. 318։



ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ
Հ. ՌՈՓԱՅԷԼ Վ. ՊԱՐՈՆՅ

Վ. ԻՆՆՆԻՒ. ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

digitised by A.R.A.R.@